ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍ

Որ ուսումնասիրութեան վայրը չունի իւր գաւառական կենտրոնական քաղաքը, նրան փոխարինում է Զուլավէր աւանը, ուր գտնում են գաւառի բոլոր կառավարչական հաստատութիւնները և ուր բնակւում է գաւառ ապետը։

Գաւառը բաժանւում է չորս ոստիկանական շրջանների՝ Բորչալուի, Լօռու, Եկատերինէնֆելդի և Թրիալէթի։ Իւրաքանչիւր շրջանը կառավարում է մի ոստիկան, որ թէպէտ հաստատուն բնակութիւն ունի որոշ գիւղում, բայց շարունակ շրջում է իւր հսկողութեան յանձնուած գիւղերում։ Բորչալուի ոստիկանը բնակւում է Զուլավէրում, Լօռունը՝ Ջալալ-օղլում, Եկատերինէնֆելդինը՝ Եկատերինէնֆելդ, իսկ Թրիալէթինը՝ Ալէքսանդերսհիլֆ գերմանական գաղութներում։ Իւրաքանչիւր ոստիկանական շրջան բաժանուած է մի քանի գիւղական հասարակութիւնների, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է մի քանի գիւղերից։ Իւրաքանչիւր հասարակութիւն կառավարւում է մի տանուտէրով։ Այսպէս՝ Բորչալուի ոստիկանական շրջանը բաժանուած է 12 հասարակութիւնների, բաղկացած 63 գիւղերից. Լօռունը՝ 17-ի, 66 գիւղերից. Եկատերինէնֆելդինը՝ 9-ի, 51 գիւղերից և Թրիալէթինը՝ 15-ի, 113 գիւղերից։

Այսպէս ուրեմն ամբողջ Բորչալուի գաւառը բաժանուած է 4 ոստիկանական շրջանների և 53 գիւղական հասարակութիւնների, բաղկանալով 293 գիւղերից։

Այժմ անցնենք գիւղերի նկարագրութեան։